ՄԱՐԻԱՄ ԵՂՅԱՆ

# ՌՈՍՏՈՄԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼԳԱՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ /1894-1902թթ./

Օսմանյան Թուրքիայի բռնակալական վարչակարգի դեմ հայ և բուլղար ժողովուրդների մղած պայքարի կարևոր դրվագներից մեկն է Հ.Յ.Դաշնակցության և Մակեդոնիայի ազատագրման համար պայքարող բուլղար հեղափոխականների[1] համագործակցության պատմությունը: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայ և բուլղարացի հեղափոխականները ձեռնարկել են բազմաթիվ համատեղ քայլեր ընդհանուր թշնամու դեմ միասնական ճակատ ստեղծելու համար:

Հայ և բուլղար հեղափոխականների համագործակցության ակունքներում կանգնած է Հ.Յ.Դաշնակցության հիմնադիրներից Ռոստոմը /Ստեփան Զորյան/: Նա ՀՅԴ գործիչներից առաջինն էր, որը գիտակցեց Արևմտյան Հայաստանի ու Մակեդոնիայի ազատագրության խնդիրների նմանությունը և այդ համատեքստում կարևորեց կապերի ընդլայնման անհրաժեշտությունը: Սկզբնական շրջանում Ռոստոմը հայ-բուլղարական համագործակցությունը դիտարկում էր որպես Օսմանյան կայսրության մայրաքաղաք թափանցելու և այնտեղ համատեղ ուժերով հեղափոխական ձեռնարկներ կազմակերպելու միջոց, մանավանդ որ 1893 թվականին ժնևում հաստատվելուց և «Դրոշակի» տպագրության գործը կազմակերպելուց հետո, նա մտադրվել էր անցնել Կ.Պոլիս:

Երկար որոնումներից հետո, ժնևում բնակվող հայ անարխիստ Ա.Աքաբեկյանի միջոցով Ռոստոմը ձեռք բերեց բուլղարացի հեղափոխական,

---

[1] 1878թ. Բեռլինի կոնգրեսի որոշումներով Բուլղարիայից խլված և կրկին Օսմանյան կայսրության տիրապետությանը հանձնված Մակեդոնիայի սլավոնական բնակչության մեծ մասը իրենց ծագմամբ, լեզվով ու մշակույթով բուլղարական արմատներ ունեին և պայքարում էին մայր հայրենիքի հետ վերամիավորման համար: Հետագայում բռնությամբ Բուլղարիայից տարանջատված Մակեդոնիայի սլավոնների մեծ մասը սկսեց էքսիկական իմաստով օգտագործել իր համար փաստորեն խորթ՝ մակեդոնացի ինքնանվանումը, որն այսօր էլ լուրջ տարաձայնություններ է առաջացնում մակեդոնացի սլավոնների և Հունաստանի միջև: Այսպիսով, 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին Մակեդոնիայում ծավալված ազգային-ազատագրական շարժումը դա բուլղարական շարժում էր, իսկ նրա մասնակիցներն ու ՀՅԴ-ի գործընկերները՝ բուլղար հեղափոխականներ: Այդ շարժման հիմնական կազմակերպիչներին մակեդոնական հեղափոխական կազմակերպությունն էր, որը հիմնվել էր 1893 թվականին՝ բուլղար հեղափոխականների կողմից:

անարխիստ Պարասկեվ Ստոյանովի հետ ծանոթանալու հնարավորություն, որպեսզի նրա միջոցով կարողանա ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթեր Կ.Պոլիս թափանցելու համար: Եվ 1894 թ. նոյեմբերին, պարսկահայատակ ոմն՝ Վրթանես Փափազյանի կեղծ անձնագրով Ռոստոմը ժամանեց Բուխարեստ, որտեղ նոր էր միայն բնակություն հաստատել և աշխատանքի անցել մասնագիտությամբ բժիշկ Պ.Ստոյանովը: Բայց ռումինական ոստիկանությունը Ռոստոմի մասին արդեն տեղեկացված էր Գալաց քաղաքից: Այստեղից տառացիորեն ոստիկանների քթի տակից, նա 1893 թվականին կարողացել էր փրկվել ու Ժնև հասցնել «Դրոշակի» տառերը: Այդ պատճառով, երկու օրից Ռոստոմը ստիպված էր թողնել Ռումինիայի մայրաքաղաքն ու անցնել Բուլղարիա ու հաստատվել Ռուսչուկում գտնվող Պ.Ստոյանովի հայրական տանը:

Սակայն Ռոստոմին անհրաժեշտ էր շտապել՝ հարկավոր փաստաթղթերը ձեռք բերելու և Կ.Պոլիս մեկնելու համար: Այդ պատճառով նա Բուլղարիայից նորից անցավ Ռումինիա՝ Բրայիլով և ապա Գալաց, քանի որ Պ.Ստոյանովը Ռոստոմին խոստացել էր ռումինական անձնագիր ձեռք բերել: Սակայն, ստանալով այդ փաստաթուղթը, Ռոստոմը դրանից այդպես էլ չկարողացավ օգտվել՝ ռումիներեն չիմանալու պատճառով և 1984 թ. դեկտեմբերի 2/14/-ին ձերբակալվեց ռումինական ոստիկանության կողմից:

Կ.Պոլիս թափանցելու առաջին փորձի ձախողումը չվհատեցրեց Ռոստոմին: Արդեն որոշակի կապեր ունենալով բուլղար հեղափոխականների հետ, Ռոստոմը կարևորում էր այն փաստը, որ վերջիններս նույնպես ջանքեր են գործադրում ՀՅԴ Կ.Պոլսի կազմակերպության հետ կապվելու համար: 1895 թվականին Մակեդոնիայի ազատագրության համար պայքարող Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը հատուկ ներկայացուցիչ էր ուղարկել Կ.Պոլսի՝ ՀՅԴ գործիչների հետ բանակցելու համար:

Նկատի ունենալով Բուլղարիայի աշխարհագրական դիրքի կարևորությունը՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաք թափանցելու գործում, Ռոստոմը սկսեց վիճարկել Ժնևում գտնվող «Դրոշակի» խմբագրատունը ուժեղացնելու և արտասահմանյան Բյուրոյի վերածելու մասին 1896 թ, վերջին 1897 թ. սկզբին կայացած ՀՅԴ կովկասյան ռայոնական ժողովի որոշումը[2]: Նա մերժում էր ոչ թե արտասահմանի, կամ Արևմտյան Բյուրո ունենալու խնդիրը, այլ վերջինիս նստավայրը Ժնևում հաստատելու անհրաժեշտությունը: Ռոստոմը գտնում էր, որ հարկավոր է «...թողնել խմբագրութիւնը միայն խմբագրութիւն, իսկ գործերը տանելու համար հիմնել Բուլգարական Բիւրո»[3]:

---

[2] Տե՛ս Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հատ.Բ , էջ 32:
[3] Ռոստոմ. Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ. 1999. էջ 90:

1897թ. վերջին- 1989թ. սկզբին կայացած ՀՅԴ կովկասյան ռայոնական ժողովը որոշում էր կայացրել նաև թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների և նրանց հեղափոխական կազմակերպությունների հետ համագործակցելու մասին[4]: Այդ խնդիրն է՛լ ավելի կոնկրետացվեց ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովում ծավալված քննարկումների ժամանակ, որոնց հիմնական նախաձեռնողը Ռոստոմն էր: Ժողովի որոշումների Զ. կետը կարևորելով Օսմանյան Թուրքիայի դեն պայքարող քրիստոնյա ժողովուրդների հետ համագործակցության խնդիրը, նրա իրականացումը դրեց կուսակցության տեղական կառույցների վրա[5]: Սա նշանակում էր, որ հույների, բուլղարացիների և ասորիների հետ համագործակցություն հաստատելու համար պետք է ուժեղացվեին Բալկանյան թերակղզում և Ատրպատականում գործող ՀՅԴ կառույցները: Այդ խնդրի առաջին մասի իրականացմանը պետք է նպաստեր Արևմտյան Բյուրոյի ձևավորումը, որի կազմում էլ ընտրվեց Ռոստոմը Քր.Միքայելյանի, Ա.Վռամյանի, Արմեն Գարոյի /Փաստրմաճյան/ և Սմբատ Խաչատրյանի /Բորիս/ հետ մասին[6]: Փոխզիջումային լուծում գտնվեց նաև Արևմտյան Բյուրոն Ժնևում հաստատելու հարցում Ռոստոմի ներկայացրած առարկությունների համար: «Դրոշակի» խմբագրության հետ միասին Արևմտյան Բյուրոն պետք է հաստատվեր Ժնևում, սակայն Ռոստոմը հնարավորություն էր ստանում տեղափոխվել Բուլղարիա՝ իր վրա վերցնելով 1897 թվականին ձևավորված Բալկանների կենտրոնական կոմիտեությունում, ինչպես նաև Կ.Պոլսում Արևմտյան Բյուրոյի ներկայացուցչի պարտականությունները:

Ռոստոմի աշակերտն ու կենսագիրը՝ Սիմոն Վրացյանը գրում է, որ նախքան Բուլղարիա մեկնելը Ռոստոմը եղել է Շվեյցարիայում, որտեղ կայացած բավականին ներկայացուցչական խորհրդակցությանը մասնակցել են ՀՅԴ գրեթե բոլոր ակնավոր գործիչները՝ նոր միայն Ժնևում հաստատված Քր.Միքայելյանի գլխավորությամբ[7]:

Քր.Միքայելյանը Շվեյցարիա էր մեկնել նույն՝ 1898-ի աշնանը: Այստեղ նա նույնպես ծանոթացել էր Մակեդոնիայի ազատագրության համար պայքարող մի շարք բուլղար հեղափոխականների հետ: Վերջիններս ՀՅԴ ներկայացուցիչներին հրավիրել էին մասնակցելու 1899թ. մայիսի 1-ին Ֆիլիպեում նշանակված Մակեդոնական կոնգրեսին: Քանի որ Ռոստոմը պետք է դառնար Արևմտյան Բյուրոյի ներկայացուցիչը Բալկաններում, հենց նա էլ մեկնեց

---

[4] Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հատ. Բ., էջ 40

[5] Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հատ. Բ., էջ 61

[6] Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Բ. տպագր., Պէյրութ,-1985, էջ 36:

[7] Վրացեան Ս., Ռոստոմ /Կենսագրական ուրուագիծ/, «Ռոստոմ. նահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, համազգայինի Վահէ Սէթեան տպարան,-1979, էջ 200:

Բուլղարիա և 1899թ. ապրիլի 19-ին հասավ Ֆիլիպե: Մակեդոնական կոնգրեսի նախօրեին բավականին լարված կացություն էր ստեղծվել Մակեդոնիայի ազատագրության համար պայքարող երկու հիմնական կազմակերպություննե-րի միջև: Դրանից մեկը գործում էր Բուլղարիայում, իսկ մյուսը՝ բուն Մակեդո-նիայում: ՀՅԴ-ն գործակցում էր երկուսի հետ էլ, սակայն նրա համակրանքը բուն Մակեդոնիայում գործող Ներքին մակեդոնական հեղափոխական կազմա-կերպության կողմն էր:

ՀՅԴ-ն ակնկալում էր, որ կոնգրեսից հետո ընտրվելիք Մակեդոնական կոմիտեն իր հետ միասին ընդունի Լահեյի խաղաղության խորհրդաժողովին ուղղված մի ընդհանուր հայտարարությունը: Սակայն, Մակեդոնական կոնգրե-սում հաղթանակ տարան եվրոպական դիվանագիտությանը ապավինվելու գործելակերպի հակառակորդները, որի հետևանքով որոշ չափով բարդացավ Լահեյի խաղաղության խորհրդաժողովին համատեղ դիմում ներկայացնելու հարցի լուծումը: Սակայն, ՀՅԴ-ի հետ կապերը պահպանելու համար, այնուա-մենայնիվ, կազմվեց և ընդունվեց այդ հայտարարագրի տեքստը: Հեղինակը Սիմեոն Ռադեվն էր, որը քիչ անց մեկնեց ժնև՝ Մակեդոնիայում ծավալված ազգային-ազատագրական շարժման օգտին քարոզչություն ծավալելու համար: Վերջ ի վերջո որոշվեց, որ համատեղ դիմումը ուղղվելու է ոչ թե Լահեյի կոնգրեսին, «...այլ եւրոպական հասարակութեան՝ կոնգրեսի առթիւ, ուրեմն պարզապէս մի պրոկլամացիա - երկու կազմակերպութիւնների կողմից[8]»:

Ռոստոմը Բուլղարիա էր ժամանել ոչ թե պարզապես կուսակցական ընթացիկ խնդիրները կարգավորելու և Բուլղարիայում ու Կ.Պոլսում Արևմտյան Բյուրոյի ներկայացուցչի իր պարտականությունները կատարելու, այլ մի ամբողջ քաղաքական ծրագրի իրականացնելու համար: Նրա կետերից մեկը նախատեսում էր. «Պուլկարահայութիւնը սիրցնել պուլկար ժողովուրդին եւ կառավարութեան՝ամրացնելով անոր դիրքը զանազան տնտեսական ու քաղաքական ոտնձգութիւններու դէմ[9]»:

Հաստատվելով Բուլղարիայում, Ռոստոմը խորացրեց ՀՅԴ համագործակ-ցությունը Մակեդոնիայի ազատագրության համար պայքարող բուլղար հեղափոխականների հետ: Հաշվի առնելով, ինչպես ՀՅԴ-ի, այնպես էլ բուլղար հեղափոխականների համար ֆինանսական միջոցներ հայթայթելու անհրաժեշ-տությունը, վերջիններիս հետ միասին Ռոստոմը նախաձեռնեց Բուլղարիային սահմանակից Օսմանյան կայսրության գավառներում բռնի հանգանակության կազմակերպման գործը: 1900թ. ապրիլի 12-ին նա հայտնում էր Արևմտյան

---

[8] Տե՛ս Ռոստոմ. Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ. 1999, էջ 162:

[9] Մսգմանեան Վ., Յուշար Ռոստոմի մասին, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ. Համազգայինի Վահէ Սէթեան տպարան.-1979. էջ 225:

Բյուրոյին՝ բուլղարացիների հետ միասին նախապատրաստվող մի ծեռնարկի մասին, որը նպատակ ուներ Օսմանյան կայսրությունում ժողովրդին թալանող մեծահարուստներից չորբաջիներից, դրամ կորզել: «Մակեդոնական Կոմիտէի հետ միասին պատրաստում ենք ճանապարհ ձգել դէպի Տաճկաստան մի խումբ: Խումբը բաղկացած է 6 հոգուց, որոնցից 3 հայ, երեքը բուլղարամակեդոնացի: Խմբի նպատակն է պարզապէս երկրի ներս մտնել եւ մի քանի իրենց հայտնի չորբաջիներից բռնի դրամ կորզել, կամ նրանց տունը մտնելով, կամ թէ նրանց լեռը քշելով: Ձեռք բերուած դրամի կէսը մերը կը լինի, կէսը Մակեդոնական Կոմիտէին[10]»: Եվ ահա 1900թ. հուլիսի 26-ին Ռոստոմը հայտնում էր Արևմտյան Բյուրոյին, որ «...տղաները վերադարձել են ողջ եւ առողջ: Հետները բերել են 16.000fr.: Դրանից զանազան ծախքեր դոքւրս գալուց յետոյ երկուսիս կը մնայ մօտաւորապէս 12.000-13.000...[11]»:

Ձեկուցեկով հաջողությամբ իրականացված բռնի հանգանակության մասին, Ռոստոմը առաջարկում էր հետևել բուլղար հեղափոխականների օրինակին՝ ոչ միայն Թուրքիայում, այլ նաև Բուլղարիայում: «Մակեդոնացիները այստեղ համրեա թէ բռնի ուժով դրամ են ժողովում բաւականին խոշոր գումարներ: Առնում են ոչ միայն բուլղարներից, այլ եւ հրեաներից, նոյն իսկ տաճիկներից: Հայերին չեն դիմում մեր խաթեր, այն հաւատով, թէ հայերը մեզ տալիս են[12]»: Այսպիսով, բռնի հանգանակության գաղափարը որպես ստեղծված ծանր ֆինանսական կացության պարտադրանք, ՀՅԴ գործունեության բաղկացուցիչ տարրն էր դառնում հենց բուլղար հեղափոխականների ձեռնարկած քայլերի ազդեցությամբ:

Բուլղարացիների աջակցությամբ, Ռոստոմը Ֆիլիպեի հարևանությամբ՝ Ռոդոպի լեռների լանջերին կազմակերպել էր նաև զինավարժությամբ զբաղվելու գործը, որը նախադրյալներ ստեղծեց հետագայում Բուլղարիայում կուսակցության Զինվորական դպրոց հիմնելու համար: Մշակվում էին նար Ռուսաստանից համատեղ ուժերով զենքի տեղափոխման ծրագրեր: Այդ փոխգործակցությունն էլ ավելի ընդլայնելու համար, 1901թ. փետրվարի 23-ին գրված իր նամակով Ռոստոմը Քր.Միքայելյանին հրավիրեց Բուլղարիա[13]:

Մինչև բուլղարացիների հետ բանակցությունները Ֆիլիպե քաղաքում, ուր հաստատվել էր Ռոստոմը, 1901թ. մարտի վերջերին-ապրիլի սկզբին տեղի ունեցավ Հ.Յ.դաշնակցության Կամքը ներկայացնող մարմնի ժողովը՝ Արևմտյան /Քր.Միքայելյան/ և Արևելյան /Հ.Շահրիկյան/ Բյուրոների, Կ.Պոլսի

---

[10] Ռոստոմ. Նամակների. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ. 1999, էջ 208:
[11] Նույն տեղում, էջ 220:
[12] Նույն տեղում:
[13] Տե՛ս Ռոստոմ. Նամակների. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 242:

/Ռոստոմ, Արամ Հակոբյան ու կարապետ Եղիկյան/ և Կիլիկիայի /Հայկ Թիրաքյան, Պետրոս Սերեմճյան/ Պատասխանատու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ ժողովը բավարարեց կուսակցության զանազան կառույցների ստացվող բռնի հանգանակություն սկսելու պահանջը, սկիզբ դնելով «Փոթորիկ» գործին:

Ռոստոմն օգտագործեց Քր.Միքայելյանի ժամանման առիթը բուլղար հեղափոխականների հետ ՀՅԴ-ի դաշինքը ամրապնդելու և անշրջելի դարձնելու համար: 1901թ. ապրիլի 10-ին Քր.Միքայելյանը ժամանեց Սոֆիա և նույն օրն իսկ բանակցեց նոր միայն ավարտված Մակեդոնական կոնգրեսի ընտրած չափավոր հայացքներ ունեցող կոմիտեի անդամների՝Միխայլկովսկու, Դմիտրովի, Ռադեվի և Վլադովի հետ: Սակայն, ՀՅԴ-ի համակրանքը բուլղար-մակեդոնական շարժման արմատական թևի ճանաչված առաջնորդ Բորիս Սարաֆովի կողմն էր, որը նստած էր Սոֆիայի բանտում: Քր.Միքայելյանը Սիմեոն Ռադևի հետ միասին դատախազից մեկ ընդհանուր տոմսակ վերցրին և անմիջապես մեկնեցին բանտ: Արտառուչ էր երկու մեծ հեղափոխականների հանդիպումը. «Սարաֆովին հանձնարարեցի բոլորիս կողմից և ջերմ համակրութիւններ յայտնեցի[14]», - գրում էր Քր.Միքայելյանը Ռոստոմին:

Բ.Սարաֆովի բանտարկությունը իրականում բուլղասրական իշխանությունների դիվանագիտական խաղն էր, որը նպատակ ուներ շեղել թուրքական իշխանությունների ուշադրությունը: Բանտում նրան միանգամից երեք սենյակ էին տրամադրել, որոնք փաստորեն վերածվել էին բուլղար-մակեդոնական շարժման շտաբի: Այստեղ Քր.Միքայելյանը արձանագրում և Ռոստոմին էր հաղորդում այն իրողությունը, որ Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը /ՎՄՌՕ-ի/ «Գրոծող տարրը դժգոհ է ներկայ կոմիտէից եւ կարծես շարունակում է տանել իր գործը բանտում՝ Սարաֆովի ղեկավարությամբ[15]»:

Ռոստոմը թեև Հ.Յ.Դաշնակցության կամքը ներկայացնող մարմնի ժողովում ընտրվել էր «Փոթորիկ» մարմնի կազմում, սակայն նա այնպես էր խրված բուլղարական գործերի մեջ, որ ստիպված էր դեռ երկար ժամանակ մնալ Ֆիլիպեում: Հին գործերին ավելանում էին նաև նորերը. 1901թ. հուլիսի 29-ին կայանալու էր մակեդոնական նոր կոնգրես, իսկ դրանից մեկ օր անց՝ հուլիսի 30-ին սկսվելու էր Բորիս Սարաֆովի դատավարությունը, որին Ռոստոմը անպատճառ ցանկանում էր մասնակցել, սակայն 1901թ. հուլիսի սկզբին Ադրիանապոլսի մոտ տեղի ունեցավ հայ և բուլղարացի հեղափոխականների միացյալ ջոկատի հերոսական ու անհավասար մարտը՝ թուրքական

---

[14] Քրիստափոր Միքայէլեանի նամակները, Պէյրութ, 1993, էջ 213:
[15] Նույն տեղում:

կանոնավոր զորքերի դեմ: Տեղի թուրք պաշտոնյաներին գերի վերցնելու համար 1901 թվականին հուլիսի 6-ին Արևելյան Թրակիայի սահմանն անցել էր բուլղարացի և հայ 10 հայդուկներից բաղկացած մի խումբ: Սակայն թուրքական բանակի երկու վաշտերի ու մի ամբողջ գունդ հեծելազորի հետ շուրջ 4 ժամ տևած դաժան մարտում զոհվել էին 2 հայ և 2 բուլղարացի: Հակառակորդը կորցրել էր մոտ հարյուր հիսուն զինվորներ: Շուտով Ռոստոմն իմացավ, որ թուրքական զորքերի կողմից գերված հայտուկների մեջ է նաև իր սիրելի ընկերը՝ նշանավոր հայդուկ Պետրոս Սերեմճյանը: Ջերբակալվածների թվում են նաև Օննիկ Թորոսյանը, Սվետոսլավ Մելջանովը և Հրիստո Հաջի Իլիևը:

1901 թվականի հուլիսից մինչև նոյեմբերի 27-ը, հայ և բուլղարացի հեղափոխականները Ադրիանապոլսի հրապարակում կախաղան բարձրացվեցին, Ռոստոմը հանգիստ չուներ, նա անընդհատ կապի մեջ էր բուլղարացի հեղափոխականների Արևմտյան Բյուրոյի և ձերբակալվածների հետ: «Պետոյից նամակ ստացայ, նույնպէս եւ Օննիկից: Հիմա լաւ են: Խեղճերին շատ են ծեծել, տանջել: Փող են ուզում, ոչ շոր ունեն, ոչ անկողին: Ուղղարկեցինք 100 fr., դարձալ կ'ուղարկենք: Ենթադրում են, որ 15-20 տարուայ դատապարուած կը լինեն[16]»,-1901թ. օգոստոսի 13-ին գրում էր Ռոստոմը «Դրոշակի» խմբագրությունը: Պետրոս Սերեմճյանի նամակում առկա՝ մահապատժից փրկվելու հույսը պայմանավորված էր նրանով, որ ինչպես օգոստոսի 26-ին հայտնում էր Ռոստոմը Արևմտյան Բյուրոին՝ «Դեռ նրա ով լինելը չգիտեն[17]»: Սակայն հետագայում դեպքերն այլ ընթացք ստացան, որի հետևանքով ոչ միայն ծանրացվեց մեղադրյալների պատիժը, այլ ծախողվեց բուլղարացի հեղափոխականների հետ կազմակերպվող՝ նրանց բանտից փախնելու ձեռնարկը: Տեղի ունեցավ մատնությունը, որին մասնակցեցին թուրքական կառավարության հետ կապված երկու բուլղարահայեր: Ադրիանապոլիս այցելած, ծնունդով ֆիլիպեցի, Ռիզա փաշան բանտում ճանաչեց Վասպուրականում իր զորքերի դեմ կռված Պետրոս Սերեմճյանին: ՀՅԴ աննկուն մարտիկի ճակատագիրը վճռված էր և նրան այլևս անհնար էր փախցնել բանտից:

Մոտենում էր 1901 թվականի ծմեռը: Ռոստոմը անսալով իր տիկնոջ՝ Եղիսաբեթ Մելիք-Շահնազարյանի հորդորներին, նոր վերարկու էր գնել իր համար: Երկու շաբաթ անց նրա ավագ աշակերտուհիները նկատեցին, որ իրենց սիրելի ուսուցիչը նորից հագել է նախորդ տարվա իր հնամաշ վերարկուն: Զարմացած աշակերտուհիներին տիկին Եղիսաբեթը ստիպված էր բացատրել, որ նա իր նոր վերարկուն ուղարկել է ցուրտ բանտում գտնվող ընկերոջը՝ Պետրոս Սերեմճեանին ... «Մենք շուարեցանք ու թեեւ այն ժամանակ

---

[16] Ռոստոմ. Նամակնի. մահուան ութսունամեակին արթիւ, Պէյրութ, 1999, էջ 265:
[17] Նույն տեղում, էջ 266:

յետպատերազմեան այս անբարոյացուցիչ նիւթապաշտութեամբ չէին տոգորուած մեր հոգիները եւ ընդունակ էինք գաղափարական զոհողութիւններու, բայց եւ այնպէս չկրցանք ընբռնել այդ արարքին մեծութիւնը: Եւ մէկը մեր մէջէն հազիւ լսելի մրմնջաց. «Հին ալ կրնայինք ղրկել»: Ռոստոմը միայն ժպտեցաւ իր բարի եւ ամէն բան ներող ժպիտով...[18]»,- վերհիշում էր Ռոստոմի աշակերտուհին Սաթենիկ Տեր-Դաւթեանը:

Կախաղանի դատապարտված ընկերոջը մի քանի օր ջերմացնելու համար Ռոստոմի ուղարկած վերարկուն հագին Պետրոս Սերեմծյանը հպարտորեն դիմավորեց մահը: 1901 թվականի նոյեմբերի 27-ին: Ներկաներից մեկը վկայում է, որ մոտենալով կախաղանին Պետրոս Սերեմծյանը դիմեց իր դահիճներին հետևյալ խոսքերով. «Դուք զիս կախեցիք, բայց ի՞նչ պիտի ընէք անհարիւրները, հազարները, որ պիտի ծնանին աս կախաղանները, ի՞նչ պիտի ընէք, երբ հնչէ ընդհանուր ապստամբութեան ժամը: Կախաղաններով չէ՞, որ բացուեցաւ Պուլկարիոյի ազատութեան արշալույսը ...[19]»:

Պետրոս Սերեմծյանի հերոսական մահը մեծ ցնցում առաջացրեց Բուլղարիայի հայության կյանքում: Ֆիլիպեում տեղի ունեցավ հայ և բուլղարացի հեղափոխականների կազմակերպված հիշատակի արարողություններ: Չմոռացան նաև ֆիլիպեում բնակվող այն երկու դավաճան հայերի մասին, որոնք մատնության հետևանքով թուրք դահիճները ճանաչել էին Վասպուրականում իրենց դեմ կռված Պետրոս Սերեմծյանին: Մակեդոնական կազմակերպության առաջնորդներից դոկտոր Գենչեվի միջնորդությամբ բուլղարացի ոստիկանները աչք փակեցին Հակոբ և Թագավոր անունը կրող այդ երկու մատնիչների՝ ՀՅԴ-ի կողմից ահաբեկման ենթարկվելու փաստի հանդեպ: Այսպիսով հայ և բուլղարացի հեղափոխականների հերոսական մահը Ադրիանապոլսում է՝ ավելի ամրապնդեց երկու բախտակից ժողովրդների համագործակցությունը: Բուլղարիայում ՀՅԴ-ն ձեռք բերեց գրեթե լեգալ կերպով գործելու հնարավորություն և 1904 թվականին նրա մայրաքաղաք Սոֆիայում կայացավ կուսակցության կողմից արտասահմանում կազմակերպված առաջին ընդհանուր ժողովը: Իսկ հետագայում՝ Բալկանյան առաջին պատերազմի օրերին, հայ-բուլղարական համագործակցությունն, որի ակունքներում կանգնած էր Ռոստոմը, ձեռք բերեց է՛լ ավելի մեծ ծավալ և ընդգրկում:

---

[18] Տեր-Դաւթեան Սաթենիկ, Բեկոր մը Ռոստոմի կեանքէն, /.«Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան.-1979, էջ235

[19] Նամակ Ադրիանուպոլսէն, «Դրոշակ», 1902, նո.1, էջ3: